



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 060 54 43 03

**«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին**

**պատճենը՝ Կենտրոնի հարկային տեսչության
պետ պարոն Ա. Հարությունյանին**

Հարգելի պարոն Թադևոսյան

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով՝ Ձեր 26.04.2016թ. N024 գրության վերաբերյալ հայտնում եմ.

Եթե Ձեր գրությամբ բարձրացված հարցադրումը վերաբերում է ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ վճարողների կողմից հարկային մարմիններին վճարած ԱԱՀ-ի գումարների հաշվանցմանը, ապա հայտնում եմ, որ ԵՏՄ անդամ պետություններից ապրանքների ներմուծման մասով հարկման բազայի և ԱԱՀ-ի գումարների ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլման հետ կապված հարցերը պարզաբանված են ՀՀ ֆինանսների նախարարի 30.04.2015թ. «Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևի լրացման որոշ հարցերի վերաբերյալ» N5 պաշտոնական պարզաբանմամբ: Այդ պաշտոնական պարզաբանման, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մասով ԱԱՀ-ի գումարները ԱԱՀ վճարողների կողմից ենթակա են հաշվանցման ԱԱՀ-ի այն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով, որում կապահովվեն ներմուծման հարկային հայտարարագիրը հարկային մարմին ներկայացնելու և, միաժամանակ, ԱԱՀ-ի գումարները հարկային մարմիններին վճարելու պահանջները:

Միաժամանակ լրացուցիչ տեղեկացնում եմ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջինից հինգերորդ մասերով նախատեսված պաշտոնական պարզաբանումները պարտադիր բնույթ չունեն, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվել պաշտոնական պարզաբանումներով:

Հարգանքով՝



Վ. Միրումյան

Հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության բաժին,
060-544-781